

պէտք է վեր հանել որ մեր հայրերը ջանացած են ասորերէն կամ յունարէն քրիստոնէական բանաձեւերը հայացնել եւ ի հարկին միայն զիմել փոխառութիւններու: Այդ փոխառութեանց պարագային բառերու նուրբ զգածումը մը վճռական պէտք է եղած ըլլայ՝ այսօր մեզի բոլորովին հասարակ դարձած իրերու ու կոչումներու քով. օր. հետաքրքրական է զիմնալ թէ ի՞նչու համար մեր Հայրերը՝ կ'որդեգրեն ասոր. *šabila* «շաւիղ», երբ անոր զիմաց ունինք զուտ հայերէն «ճանապարհ, ուղի» եւն: Վերջինս ըստ Համարարբառի՝ Ս. Գրքին մէջ երեք անգամ գործածուած է միշտ թանձրացեալ իմաստով¹⁶: ճանապարհ շատ ընդարձակ առում ունի եւ իսկական ու փոխարեակն իմաստով իբր «գործելակերպ, վարմունք» կը կիրարկուի հոն, բնականաբար համապատասխան բնագրին. մինչ «շաւիղ» առաւելագէս փոխարեակն է ճիշտ ինչպէս նոյն բառը կրօնական օժութիւն ունի ասորերէնի մէջ, իսկ Ղուրանը — իբր փոխառութիւն — միայն վերջին նբութեամբ կը ճանչնայ զայն: Պիտի եղրակացնենք որ մեր թարգմանիչները այդ բառը հիւրընկալած են իրենց բառագանձին մէջ զիտակցելով անոր կրօնական նուրբ առումին: Կարծէք պահաւ թարգմանիչն ալ է գիտակից է բառիս այդ զգածման ըզմանդակութեան ու կ'ընտրէ նման հնչող միջին պարսկ. *šubān* (յք.), հմմտ. *rah* իբր հասարակ 'ճամբայ, հայ. ուս:

Այս զուգորութիւնները կ'ուզենք փակել այն աչքառու երեւոյթով, որ թէ՛ հայ եւ թէ՛ պարսկի քրիստոնէականները միեւնոյն ասորական բառին կը զիմեն իրենց կրօնի աւանդներն ու իրենց արտայայտելու համար — փրկիչ, փրկութիւն եւն. ասոր. *parōqā*, *parqānā*, նոյնը նաեւ պահաւերէնի մէջ, թէեւ հոս իրանացուցիչ որեւէ մասնիկի պակասը կասկած կը յարուցանէ թէ արդեօք դարձեալ զաղափարանիչի մը հետ գործ չունինք, մանաւանդ որ միջին պարսկերէնի մէջ փրկիլ կրօնական իմաստին համար կը գործածուի *buxtan-buž*, հայ. բոյժ, բուժիլ իբր իրանական փոխառութիւն. կայ նաեւ առանձին բացատրութիւն իբր «փրկիչ»:

Սաղմոսարանի հայագիտական տեսակէտէ կարեւորագոյն օժանդակութիւնն են սակայն այն միջին պարսկերէն նոր բառերը,

որոնք պատահամբ պահուած են եւ հայերէն անձանօթ փոխառութիւններ անոնցմով կը լուսարանուին: Անոնցմէ կարեւորագոյններն են՝

ՎՐԱՆ. Սաղմոսարան ունի *vidan*. Andreas շատ առաջ զուգորած էր զայն հայ. վրանիմ հետ, բաղմացնելով ասով հայերէն կարգ մը փոխառութիւններու թիւը, ուր միջին պարսկ. -d- կրկնակ ձայնաւորներու մէջ հայերէն կու տար -r-, անտարակոյս պարսկերէն բարբառի մը միջնորդութեամբ¹⁷:

ՊԱՏԱՐԱԳ. Հայ լեզուագէտներն ու զիտանակները շատ միտք ու գրել յոյնացուցած էին բառիս ստուգարանութեան համար. տես համառօտ նկարագրութիւնը այդ ջանքերուն ու ընդդիմազրութիւններուն՝ Հ. Աճառեան, Արմատ. Բառ., հատ. Ե (ը. բ.): Վերջին անգամ Nyberg, Hilfsbuch, II, 191, կը փորձէր մեկնութիւն մը, զոր Աճառեան, Արմ. Բառ., է., 178. նշանակութեամբ բոլորովին անյարմար կը դռնէր: Սաղմոսարան պահած է այդ թանկային բառը. Սաղմ., 96, 8, STANet p ā d r ā y Uš šAVet O mand: Նոյն տեղիքը հայը կը թարգմանէ, Սաղմոս ՂԵ, 8 «առէք պատարագս եւ մտէք ի սրահ նորա». իմաստով, գործածութեամբ եւ ձեւով լիովին նոյն, ուստի կը զաղրի ամէն վիճարանութիւն բառիս մասին, միայն կը մնայ պահաւերէն ձեւը ստուգարանել. Andreas-Barr, Bruchstücke, 144, կը միացնեն զայն՝ հարցականով աւ. *rā* «պարզեւել», AirW, 1518, ուսկից **pātirāka* > *pādrāy* (-d- զբշուութիւնը այս շրջանին կեղծ պատմական պիտի ըլլայ, որ պիտի արտասանուէր իբր -y-):

ՀԱԻԱՍՏԻՔ. ծանօթ էր «ոստիկան» իբր պահաւ. *ōstikān* (*ōstigān*) «հաւատարիմ, վստահելի», Hübschmann, Arm. Gr., I, 216, Աճառեան, Արմ. Բառ., Ե., 541—542: Ասկից վերացական ամանց մ'ունի Սաղմոսարան՝ *a^wstikanih* 'Zuverlässigkeit, Wahrheit': Բայց նաեւ արմատն ալ պահուած է իբր *a^wst* 'ge-wiB, (?)'. հմմտ. գրոց պահաւ. *ōstābārīh*, Nyberg, Hilfsbuch, II, 166 < **avasta* (?): Հայերէն ունի *h* շնչականը, որ հարկ չկայ հայկական յաւելուած մտածել, թէեւ այն անսովոր երեւոյթ է հայերէնի մէջ, հմմտ. Meillet, Esquisse², 38. բայց նախորդ բառիս

¹⁷ Andreas, Vier persische Etymologien, NGGW, 1916, S. 6. նոյն տեղ նկատի կ'առնէ Andreas նաեւ հայ. արմատ, հում, խամ, աւան, պահապան բառերը:

¹⁶ Երուսաղ., 1895, տ. բառերս:

քով նաեւ միջին պարսկ. հարաւային բարբառը (*Տուրֆան*) ունի *hōstīyan*, ուստի կրնայ հոս *h* նման բարբառի մը աղղեցութիւնն ըլլալ:

ԱԶՏԷԶ: Բառս մէկ անգամ կու գայ Վարք եւ Վկայարանութիւնը, Բ., 125, բայց սխալ զբշուութեամբ, «ըստ սովորութեանն իւրեանց զոհս աղտեղ մատուցանէին հրոյն»: Աճառեան, Արմ. Բառ., Ա., 163, կը կարծէ ուղղել «զոհս աղտեղիս», սակայն պահաւ. կայ **uzdys* «կուռք» (Nyberg, Hilfsbuch, II, 230, *uzdēs*), ունի նաեւ Սաղմոսարան, *a^wzdēs*: Այս ճշդումով թէեւ յիշուած նախադասութիւնը զեւ կը կաղայ, բայց իմաստը պարզ է՝ «կուռքերու զոհերը կը մատուցանէին կրակի»:

ՊԱՏՐՈՅԳ < պատրոյկ. միջին պարսկերէն պահանջուած ձեւը իբր հայերէնի յառաջադիր **patrōk*, Աճառեան, Արմ. Բառ., Ե., 948, **paitiraoka*, Hübschmann, Arm. Gr., I, 229, Սաղմոսարանի մէջ երեւան կու գայ իբր *patruk*՝ *Glanz*, < **pati-rauka*:

ԳԱՀՈՅՔ < գահոյկ. Սաղմոսարան կեղծ ուղղագրութեամբ ունի *gasuk* < *gah*. հետաքրքրական է, որ ինչպէս վերեւ պատրոյգ բառի քով, նոյնպէս հոս հայը բառին վերջաւորութիւնը կը փոխէ ու կը հայացնէ, եւ իբր յոյնակերպ կը նկատէ:

ՅԱՏՈՒԿ — ԱՆՁԱՏ. Աճառեան, Արմ. Բառ., Դ., 1256, կ'ուղէ հանել յառ = *hast* արմատն, -ուկ մասնիկով. աւելի հաւանական է սակայն պահաւ. (հիւս. բարբառ) *yat*, Սաղմոսարան, 131, աւ. *yātā* «մաս, բաժին» բառին հետ կապել զնել: Նոյն բառը պիտի տար հարաւային բարբառով *jat*, հմմտ. P. Tedesco, Dialektologie der westiranischen Turfantexte, Le Monde Oriental, 15, 1921, S. 193, որ պահուած է Տուրֆանի հատակոտորներուն մէջ իբր *žata* եւ զոր հայերէն «անջատ» բառին մէջ ապահով կը վերագանենք:

ՎՐԷՊ. հայերէնի պահանջուած պահաւ. **virēp* ձեւին համապատասխան պատմական զբշուութեամբ Սաղմոսարանն ունի *vidēp*, որմէ հայերէն վրէպ < **vidēp*, ինչպէս Andreas կը զնէ¹⁸:

Հ. Պ. ԵՍՍՊԱԼԵԱՆ

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ Ի ԲՈՒԼԳԱՐԻՆ

(Շարունակութիւն):

Թղ. 150բ¹. Տրէ Ա.: Նոյ. Թ.: Վկայարանութիւն Ս. Անտոնինոսի եւ Բիքտորոսի եւ այլոցն: Թղ. 151ա¹. Ի սմին աւուր վկ. Ս. Բիկտորոսի: Ի սմին աւուր՝ Պատիոս եպիսկոպոսն Գանգրայ, յԱրիանոսաց հերձուածողաց ի վիհն ընկեցեալ...: Թղ. 151բ¹. Տրէ Բ.: Նոյ. Թ.: Վկ. Ս. Մինասայ Եզիպտացուցն: Յայմաւուր պատմութիւն Մարկայ եւ Կոստիարայ: Թղ. 154ա². Տրէ Գ.: Նոյ. ԹԱ.: Տօն է Արդիու մարդարէին: Եւ յիշ. վարուց երանելոյն Յոհաննու Ողորմածին: Թղ. 155ա². Տրէ Դ.: Նոյ. ԹԲ.: Վկ. Ս. Մելիս եպիսկոպոսին, եւ (Ե) Բուրայ Գահանային եւ Շինու Սարկաւազին: Թղ. 156ա². Տրէ Ե.: Նոյ. ԹԳ.: Վարք եւ Յիշատակ Յոհաննու Ոսկերեանին: Թղ. 158ա². Տրէ Զ.: Նոյ. ԹԴ.: Վկ. Ս. Պղատոսի եւ Ռոմանոսի: Թղ. 158բ². Յայմ. վկ. Ս. Ռոմանոսի: Թղ. 159ա². Տրէ Է.: Նոյ. ԹԵ.: Վկ. Ս. Գուրիասայ, Սամոնասայ եւ Աբիբայ Սարկաւազին: Յայմ. յիշատ. է սքանչելեացն Աստուծոյ որ եղեն. Վաղերիանոս իշխան քաղաքին Պոնտոսի: Թղ. 161ա¹. Տրէ Ը.: Նոյ. ԹԶ.: Վկ. Մատթէոսի Աւետարանչին: Թղ. 162բ². Տրէ Ի.: Նոյ. ԹԷ.: Վկ. Փիլիպոսի Առաքելոյն եւ Մարիամի: Թղ. 164ա². Տրէ Թ.: Նոյ. ԹԸ.: Պատմութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին: Թղ. 167բ¹. Այլ պատմութիւն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, վասն յուրթեան եւ ճննդեանն եւ որպիսութեան կենացն եւ նշխարացն: Թղ. 169բ¹. Տրէ ԹԱ.: Նոյ. ԹԹ.: Տօն է Ներսէսի հայրապետին եւ Խաղա Սարկաւազին: Թղ. 171ա². Տրէ ԹԲ.: Նոյ. Ի.: Վկ. Ս. Ազիտի մարտիրոսին: Թղ. 172ա¹. Տրէ ԹԳ.: Նոյ. ԻԱ.: Տօն է ամենասուրբ Աստուածածնին: Որ երկց ամաց ի տաճարն բերաւ: Թղ. 173ա². Տրէ ԹԴ.: Նոյ. ԻԲ.: Վկ. Արքիպոսայ եւ Փեղիմոնի եւ Դասիոսի: Թղ. 173բ. Յայմ. վկ. Ս. Դասիոսի: Յայմ. յիշ. է երանելոյն Աղիպոսի սիւնակեցուցն: Յայմ. գուրբ վկայն Քրիստոսի զձերունին Բարաղամ, յԱնտիօք ասորոց...: Թղ. 174ա¹. Տրէ ԹԵ.: Նոյ. ԻԳ.: Վարք եւ յիշ. Ս. Գրիգորի Ակրականացուցն: Թղ. 177բ². Տրէ ԹԶ.: Նոյ. ԻԴ.: Յիշ. է վարուց Ս. Գրիգորի սքանչելադործին: Թղ. 179բ¹. Տրէ

¹⁸ Sitz. Pr. Ak. Wiss., 1933, 127.

Ժէ: Նոյ. ԻՆ: Գիւտ զըոյն Հայոց որ ի Բա-
 լու: Ս. վարդապետն եւ ըսքանչելի այրն Աս-
 տուծոյ, ճնաւորն Մեսրոպ, աշակերտ էր
 մեծի հայրապետին Ներսէսի...: Թղ. 180ա².
 Ողբ վասն բառնալոյ թագաւորութեան Հայոց՝
 յազգէն Արշակունեաց: Եւ քահանայութեան
 ի ցեղէն Ս. Գրիգորի: Թղ. 182ա¹. Տրէ ԺԼ:
 Նոյ. ԻԶ: Վկ. Ս. Կղեմայ հայրապետին:
 Թղ. 182բ². Յայսմ. յիշ. միւս սքանչելեացն
 Աստուծոյ: Այսմ վկայ պատմեմ միւս եւս
 սքանչելիս: Նոյն վարդապետս ի յերթալն
 յերուսաղէմ, հանդիպեցաւ ի ջալանիլ ի տուն
 խօճայի միոյ քրիստոնէի...: Ի սմին աւուր
 յիշ. եւ միւս սքանչելեացն Աստուծոյ, որ
 եղեւ յԱնտիոք քաղաք Ասորոց: Թղ. 183բ².
 Տրէ ԺԹ: Նոյ. ԻԷ: Վկ. Ս. Մեակիլոսի
 Զինաւորին: Թղ. 184բ¹. Տրէ Ի: Նոյ. ԻԸ:
 Վկ. Ս. Կիկիլիա՝ եւ Բ եղբարցն: Տուրե-
 րտիսի եւ Վաղերիտի: Թղ. 186ա¹. Տրէ ԻԱ:
 Յիշ. Տրդատայ թագաւորին: Թղ. 187բ¹.
 Տրէ ԻԲ: Նոյ. Լ: Վկ. Անդրէի Առաքելոյն:
 Թղ. 190ա¹. Տրէ ԻԳ: Դեկտեմբեր եւ քանոն
 կտիմ Ա: Վկ. Ս. հայրապետացն՝ Որդւոց եւ
 Թոռանց Ս. Գրիգորի Լուսաւորչին: Թղ.
 191բ¹. Ի սմին աւուր Ս. վկայն Գրիստոսի
 Անանիա պարսկին եմուտ ի քաղաքն Ար-
 տաշի...: Թղ. 191բ². Տրէ ԻԴ: Դեկտ. Բ:
 Վկ. Ս. Երինարքոսի: Թղ. 192ա². Յայսմ.
 վկ. Ս. Թէոդոսի եպիսկոպոսին: Ս. եպիս-
 կոպոսն եւ վկայն Գրիստոսի Թէոդորոս,
 յԱղեքսանդրիա քաղաքն ուսուցանէր զբանն
 Աստուծոյ...: Թղ. 192բ¹. Տրէ ԻԵ. Դեկտ.
 Գ: Վկ. բազմահատ վկային Ս. Յակովկա
 Պարսկին: Թղ. 194բ¹. Տրէ ԻԶ: Դեկտ. Դ:
 Վկ. Սրբուհոյն Վառվառեա: Թղ. 195ա².
 Յայսմ. յիշ. վարուց Ս. Հօրն Սարայի, որ
 էր յամս բարեպաշտ թագաւորին փոքուն
 Թէոդոսի...: Թղ. 195բ¹. Տրէ ԻԷ: Դեկտ. Ե:
 Վարք եւ յիշ. Ս. Ստեփաննոսի ճգնաւորին:
 Թղ. 196բ². Տրէ ԻԸ: Դեկտ. Զ: Վարք եւ
 յիշ. Պօղոսի անապատական ճգնաւորին:
 Թղ. 198ա². Տրէ ԻԹ: Դեկտ. Է: Տօն է
 Սուրբ մարգարէին Սոփոնեայ: Յայսմ. վարք
 եւ յիշ. Ս. Թէոդուլոսի Կիպրացոյն...:
 Յայսմ. վկ. Ս. Աթենադորոսի կրօնաւորի:
 Յայսմ. տօն է Ամբակումայ մարգարէին:
 Թղ. 199բ¹. Յայսմ. յիշ. Ս. Պօղայ անապա-
 տականի եւ զիւսահալածի: Թղ. 200ա².
 Տրէ Լ: Դեկտ. Ը: Վկ. Ս. առաքելոյն Բար-
 զուղիմէոսի:

Թղ. 202ա¹. Բաղոց Ա: Դեկտ. Թ: Տօն
 է Յղութեան Աննայի եւ Յովակիմայ Զա-
 մէնաւրհնեալն Մարիամ: Թղ. 202ա¹. Բաղ.
 Բ: Դեկ. Ժ: Վկ. Ս. Մինասայ, Երմօղինեա
 եւ Գրարոսի դպրի: Թղ. 203ա¹. Սքանչելիք
 զոր արար Ս. Մինաս: Թղ. 205ա². Բաղ. Գ:
 Դեկտ. ԺԱ: Վարք եւ յիշ. Ս. Նիկողայոսի
 Հայրապետին: Թղ. 206բ². Բաղոց Դ: Դեկտ.
 ԺԲ: Վարք եւ յիշ. Երանելոյն Ամբրիոսի:
 Թղ. 208բ¹. Բաղ. Ե: Դեկտ. ԺԳ: Վկ.
 Ս. Եւստրատիոսեանց մարտիրոսացն: Թղ.
 210ա¹. Բաղ. Զ: Դեկտ. ԺԴ: Վկ. Սրբուհոյն
 Լուկիայ: Թղ. 210բ. Ի սմին աւուր կա-
 տարեցան սրով... Թերսոս եւ Լիւկիաս
 եւ Կալինիկոս...: Յայսմ. վկ. Բարսուայ
 եպիսկոպոսին եւ Սարիւլոսի քրմին եւ քեռն
 իւր Բաւէասայ...: Թղ. 211բ². Բաղ. Է:
 Դեկտ. ԺԵ: Տօն է Ս. Յակոբայ Մծրնայ
 Հայրապետին: Թ. 214ա¹. Բաղ. Ը: Դեկտ.
 ԺԶ: Վկ. Ս. Այլիթալայ եւ Տափսոնի: Թղ.
 214բ. Յայսմ. յիշ. Դանիէլի միակեցին:
 Յայսմ. վարք Երանելոյն Պատապիտոսի ճգնա-
 ւորին: Յայսմ. յիշ. վարուց Ս. Սպիրիդոնի:
 Սա էր ի Կիպրոս կղզոյն...: Թղ. 216բ¹.
 Բաղ. Թ: Դեկտ. ԺԷ: Վկ. Իդնատիոսի հայ-
 րապետին: Թղ. 217ա¹. Յայսմ. վկ. Ս. Փի-
 լիմոնի եւ Ապօղոնի եւ Արիանոսի: Թղ.
 218ա¹. Յայսմ. վկ. Ս. Ելիւթիւրոսի եպիս-
 կոպոսին: Թղ. 218բ¹. Բաղ. Ժ: Դեկտ. ԺԸ:
 Վկ. Ս. Թէոդոմպեա եպիսկոպոսին եւ
 Թէոփայ կախարդին: Թղ. 219ա². Յայսմ.
 վկ. Պրոմոսի, Արէսի եւ Եղիայի: Թղ.
 219բ¹. Բաղ. ԺԱ: Դեկտ. ԺԹ: Տեսիլ Ս.
 Գրիգորի: Զոր ետես ի Վաղարշապատ քա-
 ղաքի: Թղ. 220բ¹. Յայսմ. վկ. Ս. Բաղոսի
 արեղային: Թղ. 221ա¹. Բաղ. ԺԲ: Դեկ. Ի:
 Վարք եւ յիշ. Ս. Խոստովանող Սարկաւա-
 դացն Աբրահամու եւ Խորենայ: Թղ. 222ա¹.
 Բաղ. ԺԳ: Դեկտ. ԻԱ: Վկ. Ս. Աղղէի հայ-
 րապետին: Յայսմ. վկ. սրբուհոյն Անաստա-
 սիայ: Թղ. 223ա¹. Բաղ. ԺԴ: Դեկտ. ԻԲ:
 Վկ. տան Մարտիրոսացն եւ վկայիցն Գրիս-
 տոսի Յուլիանոսի եւ Մարինոսի: Յայսմ.
 վկ. Յուլիանոսի բժշկին եւ Սիւղիանոսի
 Եմեսու եպիսկոպոսին, եւ Ղուկասու սար-
 կաւային, եւ Մոկիմոսի ընթերցողին: Թղ.
 223բ². Բաղ. ԺԵ: Դեկտ. ԻԳ: Վկ. Թաղէոսի
 առաքելոյն, եւ որոց ընդ նմա: Թղ. 225բ².
 Բաղ. ԺԶ. Դեկտ. ԻԴ: Կատարուին Եր-
 կուց Բիւրուցն Նիկիմիդեայ: Թղ. 226ա².
 Յայսմ. վկ. Ս. Եւդիմէոսի, Մակարիոսի եւ

Տիմոթէոսի սարկաւաղին: Թղ. 226բ¹. Ի
 սմին աւուր յիշ. Բարիստոսի եւ Մարիամու:
 Թղ. 227ա¹. Բաղ. ԺԷ: Դեկտ. ԻԵ: Տօն է
 Դաւթի մարգարէին՝ եւ Յակոբայ Տեսուն-
 եղբորն: Թղ. 229ա¹. Յայսմ. յիշ. Ս. Շու-
 շանայ, դստեր Ս. Վարդանայ: Որ տըւաւ
 յամուսնութիւն ըլլելին Վրաց Վաղղե-
 նայ...: Թղ. 229ա². Բաղ. ԺԸ: Դեկտ. ԻԶ:
 Յիշ. Ս. Ստեփաննոսի Նախավկային: Թղ.
 229բ². Ս. Եփրեմի ասացեալ ներբողեան ի
 Ս. Ստեփաննոս Նախավկային: Թղ. 232բ¹.
 Բաղ. ԺԹ: Դեկտ. ԻԷ: Տօն է Ս. առաքե-
 լոյն Գրիստոսի, գլխաւորացն Պետրոսի եւ
 Պօղոսի: Թղ. 234ա¹. Բաղ. Ի: Դեկտ. ԻԸ:
 Տան է Որդւոցն Որոտման Յոհաննու եւ Յա-
 կոբայ: Թղ. 236ա¹. Բաղ. ԻԱ: Դեկտ. ԻԹ:
 Վկ. Ինդոսի եւ Դոմնայի: Թղ. 236բ¹. Ի
 սմին աւուր յիշ. Ս. Հօրն մերոյ Յովաննէս
 Գառնեցոյն. մինչդեռ էր վարդապետն Յո-
 վաննէս, ի վանս Ս. Հօրն Թաթլոյ...: Թղ.
 237բ¹. Բաղ. ԻԲ: Դեկտ. Լ: Վկ. Ս. Թի-
 մոկիլիտոսի Այս է Իրաւափառայ: Յայսմ. Ս.
 հայրն Թաթուլ առաջնորդ կացոյց զԹումաս
 աշակերտն իւր՝ վանաց իւրոց, եւ խրատ ետ
 նմա...: Թղ. 239ա¹. Բաղ. ԻԳ: Դեկտ. ԼԱ:
 Տօն է Աբղարու թագաւորին: Թղ. 240ա².
 Բաղ. ԻԴ: Եւ Յունվար Ա: Յիշ. վարուց Ս.
 Բարսղի հայրապետին Կեսարու: Թղ. 244ա².
 Բաղ. ԻԵ: Յունվ. Բ: Վարք եւ յիշ. Ս. Սեղ-
 բեստրոսի Հոռմայ հայրապետին: Թղ. 244բ².
 Հաւատաւն ի Գրիստոս Կոստանդիանոսի թա-
 դաւորին: Թղ. 246ա¹. Յայսմ. վկ. Ս. Գրի-
 դորի Պարսկին՝ որ ի Հայս՝ եւ Ս. Բասիլիս-
 կոսի բազմաչարչար նահատակին որ ի Կե-
 սարիայ...: Թղ. 246բ¹. Բաղ. ԻԶ: Յունվ.
 Գ: Վկ. Ս. Գորգիտի: Յայսմ. յիշ. վարուց
 Ս. Ստեփաննոսի սմեհամաքուր վարդապե-
 տին՝ Տէր Յուսկան որդւոյն: Թղ. 248ա².
 Բաղ. ԻԷ: Յունվ. Դ: Վկ. Ս. Զոսիմոսի:
 Թղ. 248բ². Յայսմ. յիշ. է մեծի Նահապե-
 տին՝ եւ Հօրն հաւատոյ Աբրահամու...:
 Թղ. 249բ². Բաղ. ԻԸ: Յունվ. Ե: Նաւակա-
 տիք եւ ձրաղալոյց է Մնրնդեան եւ Յայտնու-
 թեան Գրիստոսի Աստուծոյ մերոյ: Պատճառ
 ձրաղալուցի Մնրնդեան եւ Յայտնութեան
 Գրիստոսի Աստուծոյ մերոյ: Խորհուրդ ա-
 ւուր ձրաղալուցի...:

Բ. Մաս. — Թղ. 252ա—386բ:
 Թղ. 252ա. Բաղոց ԻԹ: Յունվ. Զ: Տօն
 է Մնրնդեան եւ Յայտնութեան Գրիստոսի

Աստուծոյ մերոյ: Թղ. 255բ¹. Ի սմին աւուր
 յիշ. ըսքանչելեացն՝ որ եղեւ ի գետարգել
 Ս. Նշանէն, ձեռամբ Պետրոսի կաթուղիկո-
 սին, յամի ԴՃ եւ ՀԳ (= 1024) թուականիս
 Հայոց՝ առաջի մեծ կայսերն Վասլի ի Տրա-
 պիղոն...: Պատճառ առաջին աւուր Մնրն-
 դեան եւ Յայտնութեան Գրիստոսի Աստուծոյ
 մերոյ: Թղ. 256բ¹. Ի սմին աւուր եւ մեծ
 վարդապետն Կախիկ: Թղ. 257ա¹. Բաղ. Լ:
 Յնվ. Է: Վերստին տան է Մնրնդեան եւ
 Յայտնութեան Գրիստոսի Աստուծոյ: Եւ յիշ.
 Ս. Յովաննու Կարապետին, եւ Ստեփաննոսի
 Նախավկային: Ի սմին աւուր յիշ. է եւ Ս.
 Ստեփաննոսի Նախավկային...: Յայսմ. յիշ.
 ըսքանչելի տեսեան Ս. Հօրն մերոյ Խաչիկ
 վարդապետին: Թղ. 257բ². Պատճառ Եր-
 կորդ աւուր Մնրնդեան եւ Յայտնութեան
 Գրիստոսի Աստուծոյ մերոյ:

Թղ. 258բ². Արաց Ա: Յնվ. Ը: Վերստին
 տօն է Մնրնդեան եւ Յայտնութեան Գրիս-
 տոսի Աստուծոյ մերոյ. եւ վկ. Ս. Թէոփի-
 լեայ: Ի սմին աւուր յիշ. է Ս. մանկանցն
 Բեղղէէմի: Թղ. 259ա². Պատճառ Երրորդ
 աւուր...: Թղ. 260բ². Արաց Բ: Յնվ. Թ:
 Վերստին տօն է Մնրնդեան եւ Մկրտութեան
 Գրիստոսի Աստուծոյ մերոյ եւ վկ. Ս. Պօ-
 դիքտոսի եւ Նէարիտի: Պատճառ չորրորդ
 աւուր Մնրնդեան եւ Մկրտութեան Գրիս-
 տոսի Աստուծոյ մերոյ: Թղ. 262ա². Արաց
 Գ: Յնվ. Ժ: Վերստին տօն է Մնրնդեան
 եւ յիշ. Գրիգորի Նիւսացոյն: Պատ-
 ճառ հինգ աւուր Մնրնդեան եւ յայն: Թղ.
 263բ². Արաց Դ: Յնվ. ԺԱ: Վերստին տօն է
 Մնրնդեան եւ յայն: Եւ վկ. Ս. Պետրոսի:
 Յայսմ. կատարուին Ս. Աբղայիցն, Սիւնա-
 կան եւ Ըոութայ լերինն: Պատճառ վեց
 աւուր Մնրնդեան եւ յայն: Թղ. 265ա². Արաց
 Ե: Յնվ. ԺԲ: Վերստին տօն է Մնրնդեան
 եւ յայն: Եւ վկ. Ս. Մեւորդեայ: Յայսմ. յիշ.
 է Ս. Թէոդորոսի անապատաւորի: Պատճառ
 եւթն աւուր Մնրնդեան...: Թղ. 266բ².
 Արաց Զ: Յնվ. ԺԳ: Վերստին տօն է Մնրն-
 դեան եւ յայն: Եւ վկ. Ս. Երմօղայոսի եւ
 Ստրատոնի: Պատճառ ութ աւուր Մնրնդեան
 եւ յայն: Թղ. 268ա¹. Արաց Է: Յնվ. ԺԴ: Տօն
 է Մնրնդեան Յովաննու Կարապետին եւ ծնո-
 դայ նորին: Թղ. 269բ¹. Արաց Ը: Յնվ. ԺԵ:
 Վկ. Ս. Պետրոսի հայրապետին: Եւ Արիստ-
 յոմ սարկաւաղին: Թղ. 271ա². Արաց Թ:
 Յնվ. ԺԶ: Վարք եւ յիշ. Ս. կամաւոր աղ-
 քատին Յոհանիսի: Թղ. 272ա². Արաց Ժ:

Յնվ. ԺԷ: Յիշատակ վարուց Ս. Անտոնի
 ճգնաւորին: Թղ. 274ա¹. Արաց ԺԱ: Յնվ.
 ԺԸ: Յիշ. է Թէոդոսի Թագաւորին: Թղ.
 277ա². Արաց ԺԲ: Յնվ. ԺԹ: Վարք եւ յիշ.
 Ս. հայրապետացն. Աթանասի եւ Կիւրղի:
 Թղ. 278բ². Արաց ԺԳ: Յնվ. Ի: Վկ. Սրբու-
 ճոյն Եփրոսինեա կուսին: Յայսմ. յիշ. է մեծ
 ճգնաւորին՝ Եւթէմիոսի քահանային...: Թղ.
 279բ. Արաց ԺԴ: Յնվ. ԻԱ: Վկ. Եւրինեայ
 կուսին եւ հօրն նորա Փիլիպպոսի եւ մօրն
 Կղոզեայ եւ Բ. եղբարցն Սերգեա եւ Ապի-
 տոնի եւ Բ. ներքինեացն: Թղ. 281բ¹. Արաց
 ԺԵ: Յնվ. ԻԲ: Տօն է շղթայիցն Պետրոսի
 Առաքելոյն: Յայսմ. Վկ. Ս. աշակերտին Տի-
 մոթէոսի: Յայսմ. Ս. Պամփոս, որ Թարգ-
 մանի հայերէն ամէնիմաստ: Թղ. 282ա².
 Արաց ԺԶ: Յնվ. ԻԳ: Վկ. Ս. Անատո-
 սիոսի: Թղ. 283ա². Յայսմ. յիշ. սպաննե-
 լոցն յանողորմ սրոյն Պարսից ի սպաննին
 Փոկատու զՄօրիկ Թագաւորն Յունաց...:
 Յայսմ. Վկ. սրբոյն Յակոբայ առաքելոյն:
 Ի սմին աւուր Վկ. Կուրտերիոսի քահա-
 նային...: Թղ. 284ա¹. Արաց ԺԷ: Յնվ. ԻԴ:
 Վկ. Ս. Կղեմայ եպիսկոպոսին: Թղ. 285ա².
 Արաց ԺԸ: Յնվ. ԻԵ: Տօն է Ս. Գրիգորի ա-
 սուածաբան վարդապետին: Թղ. 287ա¹.
 Արաց ԺԹ: Յնվ. ԻԶ: Վարք երանելոյն Քսե-
 նիփոնի, եւ ամուսնոյն իւրոյ Մարիամու, եւ
 որդւոց նոցին Արկաղէոսի եւ Յոհաննիսի:
 Թղ. 288ա¹. Արաց Ի: Յնվ. ԻԷ: Վերադար-
 ձուսն Յոհանու Ոսկերեքանին յաթսն իւր:
 Թղ. 289ա². Արաց ԻԱ: Յնվ. ԻԸ: Վարք եւ
 յիշ. Ս. Եփրեմի: Թղ. 290բ². Արաց ԻԲ:
 Յնվ. ԻԹ: Վկ. Ս. Նէոփիտոսի եւ երկց եղ-
 բարց: Յայսմ. կատարեցան հրով Գ. եղբարքն,
 որ ի միում ժամու ի միում յարգանդէ
 ճնեալք Սպեւիպոս եւ Մելիտասիոս, եւ հա-
 նիկն իւրեանց Նէոնիլայ վասն ի Քրիստոս
 հաւատոցն...: Թղ. 291բ². Արաց ԻԳ:
 Յնվ. Լ: Վկ. Ս. Թէոփիլոսի զօրավարին:
 Յայսմ. հանդեալ ի Քրիստոս մեծ եւ առա-
 քինի ճգնաւորն Օդաէնտիոս ի լերինն որ կոչի
 Սուր...: Թղ. 292ա². Արաց ԻԴ: Յնվ. ԼԱ:
 Վկ. Ս. Սարգսի Զօրավարին եւ որդոյ նորա
 Մարտիրոսին եւ որոց ընդ նմա: Թղ. 293ա¹.
 Ի սմին աւուր յիշ. Ս. հօրն մերոյ եւ երա-
 նաչնորհ վարդապետին Վանահանայ: Թղ.
 295բ². Արաց ԺԵ: Եւ Փետրվար Ա: Տիւն
 ունի ժամս ԺԱ. եւ զիչերն ԺԳ: Վարք եւ յիշ.
 Պարտուսայ ճգնաւորին: Թղ. 297ա¹. Արաց
 ԻԶ: Փետր. Բ: Վկ. Տրիփոնայ եւ երկց եղ-

բարց նորա: Յայսմ. Վկ. երկց Ս. եղբարցն
 Պօղոսի Պօսեբի եւ Թէոդոտոնի...: Թղ.
 298ա¹. Արաց ԻԷ: Փետր. Գ: Վարք եւ յիշ.
 Ս. Եպիփանուս եւ Շաղիտայ: Վկ. Ս. Դա-
 նաքսոսի, որ է ընթերցող եկեղեցւոյն Սուրն
 քաղաքի՝ որ է յարեւմուտս մերձ ի Բուր-
 դարս...: Թղ. 299ա¹. Արաց ԻԸ: Փետր. Դ:
 Վկ. Ս. Պապիայ Գրիգորի եւ Կղոզիայ:
 Յայսմ. Վկ. Սրբուճոյն Աղաթեայ...: Յայսմ.
 կատարուսն հաղար եւ Գ. մարտիրոսացն:
 Թղ. 300ա¹. Արաց ԻԹ: Փետր. Ե: Վկ. Քա-
 ոասուն վկայիցն: Յայսմ. յիշ. է Ս. Ժողո-
 վոյն Եփեսոսի ԲՃ. հայրապետացն: Թղ.
 301ա². Արաց Լ: Փետր. Զ: Վկ. Ս. անար-
 ծաթ բժշկացն Կիրակոսի եւ Յոհաննիսի: Թղ.
 302ա². Յայսմ. հանդեալ ի Քրիստոս մեծ եւ
 անուանի վարդապետն մեր Ներսէս, ի վանսն
 Գլաձորոյ Զ եւ ԼԳ (= 1284) Թվականիս մե-
 րոյ: Սա էր ի դաւառէն Տարօնոյ, ի քաղա-
 քէն Մշոյ, սնեալ եւ վարժեալ ի հոգնակաւոր
 վանսն Ղազարու, որ է սուրբ Առաքելաբն:
 Թղ. 302բ¹. Մեհեկի Ա: Փետր. Է: Յիշ. վա-
 րուց Անդրոնիկոսի եւ Աթանասիայ: Թղ.
 303բ². Մեհեկի Բ: Փետր. Ը: Վկ. Աբրահա-
 մու Պարսից եպիսկոպոսին: Ի սմին աւուր
 յիշ. Պարթենիոսի եպիսկոպոսին: Սա էր
 յամս Կոստանդիանոսի...: Յայսմ. կատա-
 րեցաւ սուրբ վկայն Քրիստոսի Սրբուճի Տրո-
 փոնայ...: Ի սմին աւուր Վկ. Բ. Քրեւրցն
 Մարիամու եւ Մարթայի, եւ Լիկարոնի արե-
 դայի...: Թղ. 304բ². Մեհ. Գ: Փետր. Թ:
 Վկ. Ս. Նիկիիաւոսայ: Յամս Վաղերիանոսի
 եւ Գալիանոսի ամբարիշտ Թագաւորացն:
 Ի սմին աւուր Ս. վկայքն Քրիստոսի Վիդո-
 ղինոս, եւ Նիկիիոսոս՝ Կղոզիոս եւ Սատա-
 պիոս: Պապիաս, եւ Թէոդորոս: Ի սմին
 աւուր տօն է Ս. առաքելոյն Փիլիպպոսի, որ
 էր յեթանոց սարկաւացն...: Թղ. 306ա¹.
 Մեհ. Դ: Փետր. Ժ: Վկ. Ս. Վլասայ եպիս-
 կոպոսին. Եւ Ռնէսիմայ: Յայսմ յիշ. վարուց
 սրբոյ եպիսկոպոսին Ղոսիմոսի: Թղ. 307ա¹.
 Մեհ. Ե: Փետր. ԺԱ: Յիշ. վարուց Ս. հօրն
 Եւաղրեա ճգնաւորին: Յայսմ. յիշ. սուրբ
 հօրն մերոյ եւ աստուածահաճոյ վարդապե-
 տին Միլիթարայ: Թղ. 309բ¹. Մեհ. Զ:
 Փետր. ԺԲ: Յիշ. վարուց Ս. Մարիամու,
 որ Մարինոսն կոչեցաւ: Թղ. 310բ². Մեհ. Է:
 Փետր. ԺԳ: Յիշ. վարուց երանելոյն Մար-
 տիրոսի Ս.: Թղ. 312բ². Մեհ. Ը: Փետր.
 ԺԴ: Տաւն է քառանորեա զալստեանն Քրիս-
 տոսի ի տաճարն: Թղ. 314բ². Մեհ. Թ:

Փետր. ԺԵ: Վկ. ԽԲ. մարտիրոսացն եւ Յի-
 մարայ: Յայսմ. Վկ. Ս. Յիմարայ: Սա կին
 էր ի Վանայ՝ աղաւ հայ եւ հաւատով քրիս-
 տոնեայ, առնակին ըստ կարգի օրինացն: Թղ.
 315բ². Մեհ. Ժ: Փետր. ԺԶ: Յուզայի Եղ-
 բարն Յակոբայ: Թղ. 316բ². Մեհ. Ժա:
 Փետր. ԺԷ: Վկ. Ս. Թէոդորոսի զինաւորին:
 Թղ. 318բ¹. Մեհ. ԺԷ: Փետր. ԺԸ: Վկ. Սա-
 դովիայ եպիսկոպոսին. Եւ Աղեքսանդրոսի:
 Յայսմ. Վկ. Ս. Աղեքսանդրոսի: Յայսմ. Վկ.
 ԲԺ. ան Մարտիրոսացն՝ Պամփիլիտա եւ Վա-
 ղենդեա, Պօղոսի եւ Պորփիլերոսի, Սելեւ-
 կոսի, եւ Թէոդուլոսի, Յուլիանոսի եւայն:
 Թղ. 310բ¹: Մեհ. ԺԹ: Փետր. ԺԹ: Վարք
 եւ յիշ. Ս. հօրն մերոյ վարդապետին Մեսրո-
 պայ: Թղ. 320բ². Մեհ. ԺԳ: Փետր. Ի: Վկ.
 Ս. Նօտարի Կիրենոյ եպիսկոպոսին: Յայսմ.
 Վկ. Ս. Աղեքսանդրոսի: Թղ. 321բ¹. Մեհ.
 ԺԿ: Փետր. ԻԱ: Վկ. Ս. Յակոբայ Առաքե-
 լոյն: Թղ. 323բ². Մեհ. ԺԶ: Փետր. ԻԲ: Վկ.
 Կուռնելիոսի Հարիւրապետին: Յայսմ. Վկ.
 Ս. Պողիկարպոսի: Թղ. 325ա¹. Մեհ. ԺԷ:
 Փետր. ԻԳ: Վկ. Ս. Պեոպատուեա: Յայսմ.
 Վկ. Աւագու, նոր վկային Քրիստոսի: Ան-
 քննելի են խորք իմաստնիցն Աստուծոյ...:
 Թղ. 326բ². Մեհ. ԺԸ: Փետր. ԻԴ: Գիւտ
 զլիտոյն Յովհաննու Մկրտչին: Ի սմին աւուր
 վարք եւ Վկ. Սրբուճոյն Շուշանայ: Թղ.
 327բ². Մեհ. ԺԹ: Փետր. ԻԵ: Վկ. Ս. Յիզա-
 բուղոսի Աստուածատրոյ: Թղ. 329ա². Մեհ.
 Ի: Փետր. ԻԶ: Տօն է երեւման Վարդայ Ս.
 Նշանին եւ սքանչելեաց նորին: Թղ. 331ա².
 Մեհ. ԻԱ: Փետր. ԻԷ: Վարք եւ յիշ. Ս.
 վարդապետացն մերոց Եղիշէի եւ Գրիգորի
 Նարեկացւոյն: Յայսմ. յիշ. Ս. Գրիգորի Նա-
 րեկացւոյն: Թղ. 332բ¹. Մեհ. ԻԲ: Փետր.
 Թղ. 333ա¹. Նահանջի տարին ամիսս այս
 ԻԹ օր դառնայ, մինչ ի դարնանամուտն օր
 մի յաւելնայ. դու զնահատակացս կարդայ.
 Եւ զմեղուցեալ զճողս յիշեայ: Ի սմին աւուր
 յիշ. է Ս. Նահապետացն Աբրահամու, Իսա-
 հակոյ եւ Յակոբայ: Թղ. 339բ¹. Մեհ. ԻԳ:
 Եւ Մարտի Ա: Վարք եւ յիշ. Եւզոկիայ:
 Յայսմ. յիշ. սքանչելեացն որ եղեւ ի հալա-
 ճանաց քրիստոնէիցն ի կոապաշտիցն: Թղ.
 340բ². Մեհ. ԻԴ: Մարտ Բ: Վկ. Կոնստի
 Պարտիզպանին: Յայսմ. տօն է Ամովսայ
 մարգարէին: Ամովս էր ի Թիկուայ...:
 Յայսմ. Վկ. Ս. Յոհաննու եպիսկոպոսին եւ
 Յակոբայ քահանային: Յայսմ. տօն է զետար-

զել Ս. Նշանին: Թղ. 342բ². Մեհ. ԻԵ:
 Մարտ Գ: Վկ. Ս. Եւտրոպիոսի, Կղենոնիկոսի
 եւ Բասիլիսկոսի. եւ Սմբատայ Սպարապե-
 տին Հայոց եւ նահատակութեան նորա:
 Յայսմ. յիշ. Սմբատայ Սպարապետին Հայոց
 եւ որոց ընդ նմա: Թղ. 344ա¹. Մեհ. ԻԶ:
 Մարտ Դ: Վարք եւ յիշ. Ս. Հարանցն Մար-
 կոսի եւ Մակարայ ճգնաւորացն: Յայսմ. յիշ.
 Ս. հօրն Մակարայ, որ էր Եգիպտացի, աղ-
 դաւ խաթի...: Թղ. 346ա². Մեհ. ԻԷ:
 Մարտ Ե: Վարք եւ Վկ. Ս. Կոնստոսի: Թղ.
 347բ¹. Մեհ. ԻԸ: Մարտ Զ: Վարք եւ յիշ.
 Ս. Պորփիլերոսի: Յայսմ. նահատակութիւն
 Ս. Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին:
 Յայսմ. յիշ. Ս. հօրն Թաթլոյ եւ Վարոսի եւ
 Թոմասու: Թղ. 348բ². Մեհ. ԻԹ: Մարտ
 Է: Վկ. Վասիլիոսի եպիսկոպոսին: Յայսմ.
 Վկ. Ս. Երմոսի, Սրապիոնի եւ Պաւլինոսի:
 Ի սմին աւուր յիշ. Ս. եւ առաքինասէր եպիս-
 կոպոսին Նարեկեա, որ էր եպիսկոպոս
 Երուսաղէմի...: Թղ. 349բ². Մեհ. Լ: Մարտ
 Ը: Վարք եւ յիշ. Եփրոսինեա կուսին: Թղ.
 351ա¹. Արեղի Ա: Մարտ Թ: Վկ. Ս. Քա-
 ոասնիցն որք ի Սեբաստիա կատարեցան:
 Թղ. 352բ¹. Արեղ Բ: Մարտ Ժ: Վկ. Սրբու-
 ճոյն Թէոդոսիայ. եւ Հիւսիքոսի: Ի սմին ա-
 լուր Վկ. Ս. Հիւսիքոսի: Յայսմ. յիշ. է ան-
 դամալուծին զոր բժշկեաց Քրիստոս: Թղ.
 354բ². Արեղ Գ: Մարտ ԺԱ: Նահատակու-
 թիւն սրբոց որք կատարեցան ի խուժաղուժ
 երկիրն Գթաց: Յայսմ. յիշ. Ս. հօրն Սիւլվիա-
 նոսի: Ի սմին աւուր Ս. Թէոփիլաքոս՝ որ
 Թարգմանի Աստուածապահ, Նիկոմիդացւոց
 եպիսկոպոսն հանդեալ: Յայսմ. յիշ. է Մուղ-
 րոյն զանդիանու զոր դրեաց Ս. վարդապետն
 մեր Յովաննէս Գառնեցին, ի Թվականիս
 Հայոց ԶՃ եւ ՀԱ (= 1222) ամին: Թղ. 256ա².
 Արեղ Դ: Մարտ ԺԲ: Վկ. Ը. մարտիրո-
 սացն: Յայսմ. տօն է Ս. մարգարէիցն Եգե-
 կէլի եւ Եզրի: Թղ. 357բ¹. Արեղ Ե: Մարտ
 ԺԳ: Յիշ. վարուց Ս. Գրիգորի Հոռմայ հայ-
 րապետին եւ Պետրոսի նորին աշակերտին:
 Յայսմ. Վկ. Բ. եղբարցն անարժաթ բժշկացն
 Կողմայի եւ Դամիանոսի...: Թղ. 358բ².
 Արեղ Զ: Մարտ ԺԴ: Պատմութիւն Նախա-
 հարցն Աղամայ եւ որդւոց եւ թոռանց նորա:
 Թղ. 360բ². Արեղ Է: Մարտ ԺԵ: Տօն է Դա-
 նիէլի Մարգարէի եւ երկց Մանկանց: Թղ.
 362ա². Արեղ Ը: Մարտ ԺԶ: Վկ. Սրբուճոյն
 փոստեա եւ Եւլասիայ: Յայսմ. յիշ. է Ղա-
 զարոսի՝ բարեկամին եւ սիրելոյն Քրիստոսի:

Թղ. 364ա². Արեգ Թ: Մարտ ԺԷ: Եւ աւե-
լեացն երբայցեւոց Ա: Վարք երանելոյն
Ալէքսիանոսի Մարդոյն Աստուծոյ: Թղ.
365բ¹. Սրարչութեանն աւուրցն: Թղ. 367ա¹.
Արեգ Ժ: Մարտ ԺԸ: Եւ Աւելեաց Բ: Վարք
եւ յիշ. Ս. Կիւրղի Երուսաղէմ հայրապե-
տին: Ի սմին աւուր յիշ. է երկրորդ աւուր
արարչութեան Աստուծոյ: Թղ. 368բ¹. Արեգ
ԺԱ: Մարտ ԺԹ: Աւելեաց Գ: Յիշ. վարուց
Ս. Յոհաննու Երուսաղէմայ հայրապետին:
Յայսմ. յիշ. է երրորդ աւուր արարչութեան:
Թղ. 370ա². Արեգ ԺԲ: Մարտ Ի: Աւելեաց Դ:
Վկ. Ս. Օրէնդոյ եւ Ջ եղբարցն: Ի սմին ա-
ւուր վկ. Ս. Կոպրելայ: Յայսմ. զարնանա-
մուտ է եւ յիշ. չորրորդ աւուր արարչութեան
Աստուծոյ: Թղ. 372բ¹. Արեգ ԺԳ: Մարտ
ԻԱ: Աւել. Ե: Վկ. Ս. Յունանու եւ Բարա-
քիտայ եւ այլ Թ. վկայիցն: Յայսմ. վկ. Ս.
Մելիանոսի...: Յայսմ. յիշ. է հինգերորդ
աւուր արարչութեան...: Թղ. 375ա².
Արեգ ԺԴ: Մարտ ԻԲ: Եւ Նիսան երբայցե-
ւոցն: Վարք եւ յիշ. Ս. Տօն Բենեդիկտոսի:
Յայսմ. յիշ. է վեցերորդ աւուր արարչու-
թեան: Պատմութիւն Մեծի ուրբաթին խա-
չելութեան Գրիստոսի Աստուծոյ մերոյ: Թղ.
382բ¹. Արեգ ԺԵ: Մարտ ԻԳ: Վկ. Մարկոսի
Եպիսկոպոսին. եւ Պիոնի քահանային: Յայսմ.
վկ. Ս. Պիոնի քահանային...: Յայսմ. յիշ.
է է. աւուր հանգստեանն Աստուծոյ: Ի սմին
աւուր յիշ. հրաշիցն որ եղեն յԵրուսաղէմ:
Թղ. 385ա². Արեգ ԺԶ: Փետր. ԻԴ: Վկ. Ս.
առաքելոյն եւ աւետարանչին Մարկոսի:
Յայսմ. վկ. Երմիլոյ որդւոյ թագաւորին
Լուսիկ Վարդաց Լիզոզորոսի:

Գ. Մաս. — Թղ. 388ա—567բ:

Թղ. 388ա. Ըստ կարգի Աւուրց Արար-
չութեան վեցօրեայ Այսօր Զատիկ է եւ տօն
Յարութեան Գրիստոսի Աստուծոյ մերոյ:
Ս. Եղիշէի Հայոց կաթողիկոսի ասացեալ:
Կանխողոյն Մարիամ Մազազեկացին եկն
եհաս ի զերեզմանն Գրիստոսի եւ յայնմ ժա-
մու եկն...: Թղ. 390ա². Արեգ ԺԷ: Մարտ
ԻԵ: Յիշ. Մելքիսեդեկի քահանային: Թղ.
391բ¹. Ըստ կարգի աւուրց յարութեան Գրիս-
տոսի: Այսօր մեռելոց է: Թղ. 392բ². Արեգ
ԺԸ: Մարտ ԻԶ: Վկ. Ս. Պօղոսի եւ քեռն
իւրոյ Յուլիանեա: Ի սմին աւուր վկ. Ս.
Փերփութէի եւ քեռն իւրոյ: Յայսմ. յիշ.
սքանչելեացն որ եղեւ ի դիւացն փորձանաց

ի սահմանն Երուսաղէմի...: Թղ. 395ա¹.
Արեգ ԺԹ: Մարտ ԻԷ: Վկ. հանձարեղ կուսին
Կատարինեա: Յայսմ. յիշ. Յոհաննէս քահա-
նային: Կատարեցաւ Ս. քահանայն Յոհան-
նէս, ի թվականիս մերում Պ. եւ ՄԲ. ամին
(= 1403), յամսեանն Սեպտեմբերի Ժ. եւ ես
նրաւստ Դաւիթ Եպիսկոպոս արարի զպատ-
մութիւնս: Թղ. 369բ². Արեգ Ի: Մարտ ԻԸ:
Վկ. Վահանայ Գողթնացոյն: Թղ. 399ա¹.
Արեգ ԻԱ: Մարտ ԻԹ: Վկ. Ս. Մարտիրո-
սացն Մարկիանոսի Աղէքսանդրոսի, Թէո-
դոսի եւ այլ ԼԸ. ընկերացն: Ի սմին աւուր
վկ. Գուռզաղայ պարսկին: Յայսմ. կատա-
րումն սրբոց որք ի Դիլափայտն: Թղ. 400ա².
Արեգ ԻԲ: Մարտ Լ: Վկ. Ս. Ղուկիայ: Յայսմ.
տօն է Նունեայ Ս. Ոսպին: Թղ. 401բ¹. Արեգ
ԻԳ: Մարտ ԼԱ: Վկ. Ս. Դաւթի: Ի սմին ա-
ւուր վկ. Ս. Աստուծոյ Յակոբայ քահանային
եւ Աղայ սարկաւազին: Ըստ կարգի աւուրց,
այսօր կրկնադատիկ է եւ հաստութիւն Թու-
մայի առաքելոյն ի թերութեանէ հաւատոցն՝
Ս. Յակոբայ Ս. Եպիսկոպոսին ասացեալ ի
թերահաւատութիւն Թումայի առաքելոյն:
Յորժամ յարեաւ ի մեռելոց հովիւն քաջ...:
Թղ. 405ա¹. Արեգ ԻԴ: Եւ Այրիւ Ա: Վարք
եւ յիշ. Մարիամու Եղիպտացոյն պոռնիկ
ճղնաւորին: Թղ. 406բ¹: Արեգ ԻԵ: Այր. Բ:
Վարք եւ յիշ. Ս. Հարանցն Սերապիոնի եւ
Արքայ Մարկոսի: Թղ. 409բ¹. Արեգ ԻԶ:
Այր. Գ: Յիշ. վարուց Ս. Տօն Մարկոսի
Հոռոմայեցոյն: Թղ. 411բ². Արեգ ԻԷ: Այր.
Դ: Վկ. Ս. Ամփիրիտոսի՝ Եղիսկոսի եւ Մեմ-
նոսի: Յայսմ. վկ. Ս. մանկանցն. Գ. քերցն՝
Աղապի, Երիւի եւ Քսենիին: Յայսմ. վկ. Ս.
Սեւեռիանոսի եւ Մեմնոսի եւ այլ ԼԸ վկայիցն:
Յայսմ. վկ. Ս. Բասիմոսի: Թղ. 413ա¹.
Արեգ ԻԸ: Այր. Ե: Վկ. Ս. Աղապի սարկա-
ւազին: Եւ Թէոդուլոսի ընթերցողին: Յայսմ.
վկ. Ս. Կալիպոսի: Ի սմին աւուր վկ. Ս. Պօ-
սիլիպոսի, որ էր յամս Անդրիանոսի...:
Յայսմ. յիշ. է Ս. Տօն Մարկոսի: Թղ.
414ա¹. Արեգ ԻԹ: Այր. Զ: Վկ. Ս. Սարայի
Մարտառեւտին եւ Ռուսինոսի: Յայսմ. յիշ.
է վարուց սքանչելի առն Աստուծոյ Ս. Ըռու-
սիմասի, որ էր ի զաւատէն մոկաց՝ աղաւ-
հայ: Եւ էր անտես վանացն փասայ...: Թղ.
415ա¹. Արեգ Լ: Այր. Է: Տօն է Աւետեայ
Ս. Աստուածածնին Ս. կուսին Մարիամու:
Յայսմ. յիշ. սքանչելեացն՝ որ եղեւ ի Ջձ.
եւ ՀԲ. (= 1223) թվին Հայոց:

Թղ. 417ա². Ահկի Ա. Այր. Ը: Վկ. Ս.

իշխանացն Սահակայ եւ Համաղասայ:
Յայսմ. վկ. սրբոցն՝ որ ի զերութեան պար-
սիցն կատարեցան: Թղ. 418բ. Ահկի Բ:
Այր. Թ: Տօն է Ս. առաքելոցն Եւթանաս-
նիցն: Թղ. 420բ². Ահկի Գ: Այր. Ժ: Վկ.
Ս. Եղիսկոպոսին Անթիպասայ: Եւ անողորմ
Պետրոսի եւ Գէորգեայ ճղնաւորին: Յայսմ.
յիշ. Ս. Գէորգեայ անապատականին: Ի սմին
աւուր Ս. վկայն Գրիստոսի Դէոսկորիդոս,
ի Ջմիւռին քաղաքին: Յայսմ. պատմութիւն
անողորմ Պետրոսի: Թղ. 422բ². Ահկի Դ:
Այր. ԺԱ: Վկ. Ս. Արտեմեա քահանային:
Ի սմին աւուր վկ. Ս. Եպիսկոպոսին Ակա-
կիոսի: Թղ. 424ա¹. Ահկի Ե: Այր. ԺԲ: Վկ.
Ս. Կրեակիւնդոսի: Յայսմ. վկ. Ս. Շմաւոնի
Պարսից Եպիսկոպոսին: Ի սմին աւուր վկ.
Փերփութէի եւ քեռն իւրոյ: Թղ. 425բ².
Ահկի Զ: Այր. ԺԳ: Վկ. Ս. Սարայի: Ի սմին
աւուր վկ. Ս. Ղեւոնդիոսի, եւ է Ս. կա-
նանցն, Քարէսի, Նունիքի, Բասիլիդիա, Քա-
ղինա, Կալիպոսի եւ Թէոդորոյ: Յայսմ. յիշ.
Ս. Տօն Պօղոսի: Թղ. 426բ². Ահկի Է: Այր.
ԺԴ: Վկ. Ս. Սարինոսի: Ի սմին աւուր վկ.
Ս. Արդաւի Եպիսկոպոսին եւ Որմղանայ եւ
Սայինի եւ Բենիմմենի սարկաւազին: Թղ.
428ա². Ահկի Ը: Այր. ԺԵ: Վարք եւ յիշ.
Ս. Աղապիտոսի հայրապետին: Յայսմ. յիշ.
տեսական Ս. վարդապետին Յովանու Գառ-
նեցոյն, զոր պատմեաց մեղ եւ ասաց այս-
պէս. մինչ էի ես ի Հոռոմկան եւ բնակէի ի
Տօն որ կոչի Աշորնիս: Թղ. 429բ². Ահկի
Թ: Այր. ԺԶ: Վկ. Արդաւի կատակողին:
Եւ Սմբատայ թագաւորին: Յայսմ. նահա-
տակութիւն Ս. Սմբատայ թագաւորին եւ
որոց ընդ նմա: Յայսմ. աւուր երանելին Անոյշ
ի Թեսաղոնիկէ քաղաքին: Թղ. 430բ². Ահկի
Ժ: Այր. ԺԷ: Յիշ. Ս. Յոհաննու Աւճնեցոյն:
Թղ. 432բ¹. Ահկի ԺԱ: Այր. ԺԸ: Վկ. Ս.
Յուլիանոսի: Յայսմ. վկ. Ս. Սահակայ,
պարսիկ վարդապետին: Թղ. 434ա¹. Ահկի
ԺԲ: Այր. ԺԹ: Յիշ. Ս. Եպիսկոպոսացն
Գերսոնայ քաղաքին: Յայսմ. յիշ. է ումեմն
ճերոյ եւ խտակածն ճղնաւորի: Թղ. 435ա².
Ահկի ԺԳ: Այր. Ի: Յիշ. վարուց Ս. Աթա-
նասի եւ Սեւեռիանոսի պատրիարքին: Ի սմին
աւուր յիշ. Բ. եղբարցն միանձանց՝ որ բնա-
կեալ էին յանապատի...: Թղ. 436ա². Ահկի
ԺԴ: Այր. ԻԱ: Վկ. Ս. Կողբատիոսի: Յայսմ.
վկ. Ս. Եսպերիոսի եւ ամուսնոյն իւրոյ
Չոյեայ. եւ Բ. որդւոցն Կիւրոսի եւ Թէոդու-
լոսի: Յայսմ. վկ. Ս. Գէորգեայ եւ Ոսորո-

վու...: Թղ. 437բ¹. Ահկի ԺԵ: Այր. ԻԲ:
Վարք երանելոյն Թէոդորոսի ճղնաւորին:
Թղ. 438բ². Ահկի ԺԶ: Այր. ԻԳ: Վկ. Ս.
Գէորգեայ զօրավարին: Եւ որոց ընդ նմա
կատարեցան: Թղ. 441բ². Ահկի ԺԷ: Այր.
ԻԴ: Վկ. Ս. Պասիկրատեայ եւ Վաղենտինոսի:
Յայսմ. վկ. նոր վկային Գրիստոսի Ս. Թա-
մարայ: Դարձեալ համառօտեցից զպատմու-
թիւն միւս այլ կնոջ աւեր աղջկան, որ էր ի
Խառաքաստայ, եւ տաճկացեալ ի Բեթլիքի՝
նստաւ ի փողոցի որ ասի Խառապաքի...:
Վերջ՝ կատարեցաւ ի Գրիստոս, յաւուր
տօնի Ս. Գառնանիցն եւ եղեւ նոցա պսակա-
կից...: Այս եղեւ ՊՍ (= 1341) թվականիս
Հայոց: Յամս նոյն Մելիք Աղղնին, եւ կնոջ
Փաշային: Էր նա յերկրէն Արմիւշայ, ի զեղ-
ջէն Խառաքաստայ, եւ անուն նորա Եղիսա-
քեք: Թղ. 444ա². Ահկի ԺԸ: Այր. ԻԵ:
Յիշ. վարուց Ս. Տօն Երասիմոսի ճղնաւո-
րին: Թղ. 445ա². Ահկի ԺԹ: Այր. ԻԶ: Վկ.
Վասիլիոսի Եպիսկոպոսին: Ի սմին աւուր
յիշ. ողորմութեան պատրիարքին Աղէքսան-
դրոս...: Թղ. 446ա². Ահկի Ի: Այր. ԻԷ:
վկ. Ս. Մարտիրոսի եւ Գուրայի: Յայսմ. վկ.
Ս. Թէոդորոսի եւ Արիանոսի սարկաւազին:
Ի սմին աւուր վկ. Ժ. մարտիրոսացն, Մա-
րիամու եւ Նիկանդրոսի, Ապոլոնի եւ Ղեւոն-
դէոսի եւ այլն: Թղ. 447ա². Ահկի ԻԱ: Այր.
ԻԸ: Վարք եւ յիշ. Պաքսիմոսի: Յայսմ. յիշ.
Ս. Հօրն Ամոնի, որ բնակէր ի Թերսայի, եւ
ունէր միարան աշակերտս ԳՌ. չորս եւ Տար-
սոնացիս անուանեն: Թղ. 448ա². Ահկի ԻԲ:
Այր. ԻԹ: Վարք եւ պատմութիւն Բատայ
ճղնաւորին: Թղ. 449բ². Ահկի ԻԳ: Այր. Լ:
Վարք եւ յիշ. Պեղիղեայ կուսին եւ այլոցն
ընդ նմա: Յայսմ. վարք եւ յիշ. Ճ. եւ Կ.
կուսանացն որ յԱնտիօք: Թղ. 451ա².
Մայիս ամիս Հոռոմայեցոց աւուրս ունի ԼԱ:
Տիւն ունի ժամս ԺԴ, եւ զիշերն Ժ. սորին
ի Ա: Եւ ահկի ամիսի ԻԴ: Տօն է Երեմիայ
Մարգարէին եւ աշակերտացն Բարուքայ եւ
Արիմեիթեայ: Թղ. 453ա². Ահկի ԻԵ:
Մայիսի Բ: Տօն է եւ յիշ. Տնընդեանն Եղիսայի
եւ վերացմանն: Թղ. 454ա². Ըստ կարգի
աւուրց յարութեան: Յայսմ. աւուր համբար-
ձումն է Գրիստոսի Աստուծոյ մերոյ: Թղ.
456ա². Ահկի ԻԶ: Մայիս Գ: Վկ. Ս. Տիմո-
թէոսի եւ Մօրասայ: Ի սմին աւուր յիշ.
սքանչելեաց արձակման քահանային: Թղ.
457բ¹. Ահկի ԻԷ: Մայիս Դ: Վկ. Ս. Եպիս-
կոպոսին Սիւղիանոսի: Յայսմ. յիշ. է վա-

բուց Ս. Գեորգեա կուրի: Որ էր կոյր ի ծնէ յԱրմէս քաղաքէ եւ մի ոմն ընկեր եւ յառաջնորդ նորին Գրիգոր անուն...: ԹՊ. 458բ¹. ԱՆԿԻ ԻԸ: Մայիս Ե: ՎԿ. Տիմոնի Առաքելոյն. եւ Իրենեայ կուսին: ԹՊ. 460ա². ԱՆԿԻ ԻԹ: Մայիս Զ: ՅԻԶ. Յորայ արդարոյն եւ երանելոյն: ԹՊ. 461բ¹. ԱՆԿԻ Լ: Մայիս Է: Տօն է Երեւման Ս. Խաչին յերուսաղէմ: Յայտմ. յԻԶ. է ողորմութեանն Աստուծոյ:

(Շարունակելի:)

Ն. ԳԱՍԱԳԵԱՆ

**ՄԱՐԿՐԳՐԵՅ ՆԵՐՍԵՍԻ ՎԵՆԵՐԻ
ԿՈՆՏԱՆՆԵՐԸ**

(Շարունակութիւն:)

Ժ.

ԿՈՆՏԱՆ ՄԻԲԱՅԷԼ Ա. ՍԵՐԱՍՏԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
(1563(4)—1570)

Ստեփանոս Ե. Կաթ. Սարմատեցիին յաջորդն է Միքայէլ Ա. Սերաստացիին, որ Ստեփանոս Զուղայեցիին վկայութեան համեմատ ՌԶ թուականին, այս է 1557ին Նախավկայի կոնդակ մը կը գրէ՝ «Ի տէր Միքայէլի ՌԶ»: Այս պարագային հարկ պիտի ըլլար խորհելու որ՝ Միքայէլ զայն գրած ըլլար աթոռակից կաթողիկոս եղած ատեն: Սակայն անոր բովանդակութեանն ու դրութեան հեղինակարար արտայայտութիւնը այդ վարկածը կը մերժեն: Արդէն անոր մէջ յիշատակուած թուականն ամէն տարակոյս կը բառնայ: «Գրեցաւ Գիր օրհնութեան բարձր հրամանի սրբոյ աթոռոյս էջմիածնի ի թուականութեանն Հայոց ՌԺԲ (1563) ամի» (հմմտ. վարը եւ Շահխաթունեան, Մտորագրութիւն, Ա., էջ 53): Ուտի Ստեփանոսի թուականը պէտք է սրբադրել եւ կամ մտածել թէ այդ թուականին (1557ին) Միքայէլ ուրիշ կոնդակ մըն ալ գրած ըլլայ: Այդպէս խորհելու պատճառ մը չունինք առ այժմ:

Զունինք Միքայէլի այս կոնդակին ՆկարՊԳՐՈՒԹԻՒՆԸ, բայց ունինք անոր ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ՝

Անուամբ անդին Աստուծոյ Հօր եւ ի փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդոյն Միածնի եւ ի գովեստ Բղիսեցելոյն ի նմանէ Հոգւոյն ճշմարտի: Այս մեր հոգեւորական

բարձր հրամանի հաստատութիւն է եւ օրհնութիւն: Ի Միքայէլ ծառայից ծառայիցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ Տեառն: Շնորհօք եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ամենայն ընդհանուր Հայաստանեայց եւ եպիսկոպոսապետ Մեծաց Հայոց եւ Պատրիարք արեւելեան Վաղարշապատու, անդապահ եւ յաջորդ աթոռակալ եւ փոխանորդ սրբոյ առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թաթևոսի եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Զոր գրեմք ի գրանէ աստուածազեր աթոռոյ եւ լուսակիր տաճարէ աստուածաչէն կաթողիկէ սուրբ էջմիածնի եւ ի բաղմահաւաք սրբութեանցն: Նախ աստուածամուկս սուրբ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի Քրիստոսի: Եւ ի թաղն արքայական ի փշոց պսակէ եղեալ ի գլուխն Յիսուսի, եւ ի սեւեռեալ բեւեռաց բաղկացն Յիսուսի: Եւ ի ծածկոյթ յերեսացն Յիսուսի ի սուրբ վարչամակէն: Եւ ի տէրունական աստուածընկալ սուրբ նշանացս: Եւ ի շնորհարաշխ Աջոյս մեր սուրբ Լուսաւորչին Գրիգորի: Եւ ի սուրբ կուսանաց գերեզմանացս Հովիտիմեանց եւ Գայիանեանց: Եւ այլ սրբութեանցս աստուածազարդ սուրբ Աթոռոյս էջմիածնի: Զոր եւ առաքեմք նախ ի Նախավկայի վանքն եւ յիւր սեպհական թէմն. նախ յամէնօրհնեալ եւ աստուածապահ յանուանի եւ յակնաւոր մայրաքաղաքն ի Սոյ, որ է Զարեանդ գաւառ եւ յամենայն վիճակն իւր բոլորովին: Ի Ղարաղաղէն, որ բաժանի Առաքելոց յերկրէն եւ զնայ մինչեւ ի Ղարաթափայն եւ բաժանի ի Սարմատայ, յերասխայ մինչեւ ի Մարանդայ գրիւէն: Ի Շիրինթալն իւր յերկրոյն: Ի յաստուածախնամ գիւղաքաղաքն Զուղայ եւ իւր վանքն: ՅԱստաղատ եւ իւր վանքն: Ի Մեծ քաղաքն Նախչուան: Եւ ի Շամբի ձորն բոլորովին: Յորոց այդոցիկ բնակչացդ ի միասին: Պատուելի քահանայիցդ, սրբասէր կրօնաւորացդ, աստուածասէր ձեռադործացդ, բարեպաշտ տանուտերացդ, իմաստուն վաճառականացդ, ձեռնահմուտ արհեստաւորացդ, աշխատասէր հողագործացդ, եւ ամենայն չափու հասակի մեծի եւ փոքու, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից եւ ամենայն չափու հոգեւոր գաւակաց բաղմաշարչար նահատակին սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որով անուանք ձեր գրեալ են ի գրին եւ գրին կենաց յանմոռաց յիշատակութիւն Աստուծոյ:

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն հոգեւոր որդիք մեր ի Քրիստոս, զի որպէս օրէն է աստուածային եւ սահման մահկանացու բնութեանս, ամենայն որդի հարազատ ժառանգել զտունն եւ զհայրենիս հարց իւրեանց: Այսպէս եւ այսու օրինակաւ եկն առ մեզ ի յաղմանէ Հոգւոյն սրբոյ ընտրեալդ Աստուծոյ եւ ի մարդկանէ հեղահոյի բարեմիտ եւ սրբասէր կուսակրօն արքեպիսկոպոսդ (զ)տէր Մատթէոս, որ է սնեալ եւ վարժեալ ի սուրբ Նախավկայի վանքն եւ ուսեալ էր զբանս իմաստասիրական եւ աղօթս առնէր խոնարհութեամբ, ուսեալ էր զվարս առաքինութեամբ, որ եկն ի յաթոռս ձեր ամենայն միաբանից վկայութեամբն, մանաւանդ բոլորեցունց ձեր թեմովդ քահանայից եւ ժողովրդոց վկայած. նաեւ Աստուծոյ իսկ: Իսկ մեք որպէս խնամածու եւ գթած հայր ի վերայ սիրելի որդւոյ իւրոց պատշաճ եւ իրաւունք համարեցաք լինել զտէր Մատթէոս արհեսպիսկոպոս սուրբ ուխտին Նախավկայի, եւ իւր սեպհական վիճակին եւ ոչ զայլ ոք օտար, զի օտարն վարձկան է եւ ոչ է ճշմարիտ հովիւ: Վասն որոյ կոչեցաք զդա ի կարգ եւ յաստիճան արհեսպիսկոպոսութեան խորհրդով ձեռնադրութեամբ աստուածային իշխանութեամբն զտէր Մատթէոս արհեսպիսկոպոս աստուածամուկս Գեղարդեամբս եւ աստուածախօս սուրբ Աւետարանաւս եւ շնորհարաշխ սուրբ Աջովս մեր սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի մէջ յերկնաման սուրբ տաճարիս էջմիածնի: Եւ պարգեւացք զմա զյակնաւոր սուրբ ուխտն Նախավկային բոլորովին բնական եւ սահմանեալ իւր վիճակաւն, զոր վերոյգրեցաք զմա թեմ, աթոռ եւ հանդատեան տեղի: Վասն որոյ եւ առաջնորդութեամբ Միածնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք սրբազան զտէր Մա(տ)թէոս արհեսպիսկոպոս առ ձեզ մերով առաքելական եւ հայրապետական իշխանութեամբ հովուել զձեզ եւ ուսուցանել՝ զնալ յօրէնս Տեառն անարատութեամբ եւ ի պատուիրանս սրբութեամբ, տալով զանձն իւր օրինակ բարեաց ամենեցուն: Մանաւանդ պահեցէ զանձն իւր սրբութեամբ, արդարութեամբ եւ խոնարհութեամբ, առնելով ինքն եւ ապա ուսուցանելով ձեզ, պահելով զանձն իւր անբանբաս առ մարդիկը եւ անդատապարտ առ Աստուած: Եւ ի վերայ այսք ամենայնի լիցի այցելու եւ հայր որբոց եւ այրեաց. տնանկաց եւ աղքատաց եւ լիցի ամենեցուն հոգւով եւ մարմնով ցաւակից եւ վշտա-

կից սիրով Քրիստոսի: Կոչեացէ զիմաստունսն եւ զարժանաւորսն եւ վկայեալսն ի կարգ եւ յաստիճան կիսասարկաւազութեան եւ քահանայութեան, կալցի եւ հրամանաւ մերով ի վերայ ձեր առաքելարար իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ: Այլ եւ զամենայն կանոնեալ հաս եւ զիրաւունս ձեր զոր յամենայն տարի պարտիք տալ Աթոռոյ բաժին տուք ի սուրբ Նախավկայի վանքն ի ձեր հոգւոյ տունն: Եթէ զինչ է հաս եւ իրաւունք, այս է հասն եւ իրաւունքն. զինչ էրէց որ ի թեմս կայ, նոցա տանէն զինչ հասք որ լինի մուտքն Նախավկային է, Տէրունական մատաղն որ լինի երին եւ մորթին իւր Աթոռոյն է, յանկարծամահ որ լինի քառասնիցն ու մատաղն եպիսկոպոսին է եւ կողոպուտն լաւ խալին մի կամ լաւ շուրջառ տան յԱթոռն: Զերախայրիս կալոց եւ զհնձանաց. երախայրիքն այն է յիշնաղլուխ կէս մարզան հաց. ամէն հնձանէ մէկ զորակ զինի: Զսրբանուէր, որ է սրբոց գրամ, այդ եկեղեցւոյ եւ ի յաշի լուսազին է: Այս ամենայն աշխարհ, յոր տեղ որ քրիստոնէութիւն կայ զայդ կու տան իւրեանց Աթոռոյն: Եւ առաւել զսրբանուէրն որ եկեղեցւոյ եւ խաշի լուսազին է, որ ի շատէն շատ եւ ի քիչէն քիչ, որպէս ասէ Աւետարանն թէ՛ որում շատ տուաւ շատ խնդրեցի ի նմանէ. եւ որում սակաւ. որ ամէն տարի մի անգամ սրբազրամ ժողովին, որ սրբոցն է բաժին: Եւ այլ ինչ հարկաւոր հարկ որ լինի, առանց Աթոռոյ հրամանան չունիք իշխանութիւն կատարել թէ մատաղ է թէ խաչ օրհնեացք, թէ այլ ինչ որ պատեհն է սուրբ Աթոռոյն, որպէս յամենայն տեղի:

Այս է հաս եւ իրաւունք Աթոռոյն բաժին, զոր ասացի զամենայն: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ զմա եւ կամ խորիցէ իրաւանց զորա եւ կամ չի հնազանդի զմա եւ հակառակ լինի հրամանաց մերոց եւ կաթողիկոսարանիս կամ այլազգիք անկանին եւ ոյժ հասուցանեն սրբոյ Աթոռոյն այնպիսիքն եղիցին ի ներքոյ պատժոց եւ զատապարտութեան: Զպատիժն Կայենի սոցեն, զմասն Յուդայի եւ զՄաշհանուացն սոցեն: Ամէն: Իսկ հնազանդեալքն զորա եւ հրամանի սրբոյ Աթոռոյս օրհնեալ լիցին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց եւ ի մէջն: Ամէն:

Եւ զուր սպասաւորք սուրբ Նախավկայիդ մեծ եւ փոքր միաբանք սուրբ ուխտիդ սիրով ընկալարուք զտէր Մա(տ)թէոս եպիսկոպոսդ